ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2021թ-ի օգոստոսի 27-ի N 1380-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնիթափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցում 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև ժամը 15^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 19-ին՝ ժամը 14^{00}-ին, ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցում:

Հասցե՝ ք. Արարատ Խանջյան 63

Տեղեկությունների համար դիմել դիմել դպրոցի կառավարման խորհուրդ, հեռախոս՝ 055901800, Մանուկյան Նունե

էլեկտրոնային հասցե՝ ararat4@schools.am